

ուին լքել իրենց երկիրը եւ բռնել տարագրութեան ճամբան, — նախ ժԱ. դարուն եւ յետոյ ժԴ. դարու երկրորդ կիսուն: Այս գաղթականները երկու անգամ թափանցած են ուումէն շրջաններու մէջ: Անոնք որ ժԱ. դարուն եկան՝ ստիպուեցան անցնիլ եւ երկար ատեն մնալ Սեւ ծովու հիւսիսի թաթարներուն մէջ՝ փոխ առնելով թաթարական անուններ, եւ իսլամ մոնղոլներու յատուկ բարքեր: Անոնք որ աւելի յետոյ եկան, ժԴ. դարուն, զերծ էին մոնղոլական այս ազդեցութենէն, որովհետեւ անցան եւ մնացին այնպիսի քաղաքներու եւ շրջաններու մէջ, ուր տիրող էին իտալացի վաճառականներու, մանաւանդ ի Կաֆա: Անկէ անցան, առեւտրական ճամբաներով, Քրաքովիա եւ Լէմպէրկ, աւեմտեան սահմանը Կաֆայի ճամբաներուն, եւ հոնկէ իջան Կամենից ու ամբողջ Մոլդովան, այն պահուն երբ կը կազմուէր իշխանապետութիւնը: Մոլդովայի հայ բնակչութեան գլխաւոր կեդրոնը եղաւ Սուչովան, ուր, մեծ քաղաքին մէջ, իրենց մասնաւոր քաղաք ունեցան, որովհետեւ ունէին իրենց սեփական կազմակերպութիւնը՝ ձեւուած լեհ քաղաքներու տիպիկ կազմակերպութեան վրայ, հայ քաղաքապետով (սոյքաուգ) եւ մասնաւոր խորհրդականներով (փրքկար):

«Զիրենք պահեց միմիայն իրենց քրիստոնէական դաւանանքը որ տարբեր էր ումմանականէն, որովհետեւ իրենց ապրելակերպը՝ այս նոր հայրենիքի բնիկներուն խիստ նման՝ պիտի նպաստէր ձուլելու զիրենք տեղական բնակչութեան մէջ: Հակառակ կրօնական այս տարբերութեան, ումմաններու հետ իրենց հաւաքական կեանքին առաջին իսկ օրերէն, կը սկսին ապաղգայնանալ եւ ումմէն անուններ առնել, անցնելով Հունդարիա եւ հաստատուելով Սաքսաններուն եւ հունգարներուն մէջ՝ իբր առաւելապէս ումմէն տարր, զօրացնելով այսպէս ումմէն առեւտուրը Թրանսիլվանիոյ մէջ:

«Քիչ քիչ հայերը կը տարածուին Մոլդովայի բոլոր քաղաքներուն մէջ հիւսիսէն հարաւ, բայց, հարաւային քաղաքներու մէջ դէմ առ դէմ դալով հայկական նոր գաղթարշաւի մը՝ որ կուզար նորակազմ եւրոպական Թուրքիայէն:

«Ռէպի Միջերկրական գաղթող հայերը ատեն մը ապաստանած էին բիւզանդական

կայսրութեան իտալական գաղութներուն մէջ: Երբ թուրքերը կը տիրանան Պոլսոյ եւ կը թալանեն առեւտրական բոլոր հաստատութիւնները, հայերը դէպի հիւսիս խոյս կուտան եւ պահ մը ապաստան կը գտնեն Չէթաթէ-Ալպայի մէջ ուր ատեն մը աւելի շատ հայեր կային քան Մոլդովայի մնացած բոլոր մասերուն մէջ եւ ուր մնացին անոնք նոյնիսկ երբ թրքական քաղաք մը դարձաւ՝ Աքքէրման անունը առնելով: Հոնկէ կ'անցնէին ումմէն քաղաքներ դործի համար եւ կը մնային երբեմն հոն ուր յարմար կը թուէր իրենց (Ն. Եօուկա. — Հայերն ու Ռումէլները):

«Այս տարրերը, մեզի հասած այնքան ճամբաներով եւ բաւական մեծ թիւով, բնակչութեան կարեւոր մէկ մասը կազմեցին մասնաւորապէս մոլդով քաղաքներուն, որովհետեւ քիչ թիւով հաստատուած էին ումմէն երկրի (պէտք է ըլլայ) Վալաքիոյ շրջանին) մէջ՝ հոն առեւտուրը արդէն բռնազբաւուած ըլլալով իրենցմէ առաջ հոն հաստատուած ուրիշ օտար տարրերով: Անոնց անցեալին մասին մեր խօսածներէն կարելի է հետեւցնել որ հայերը ունէին հին մշակոյթ մը, բայց առեւտրական երկար փորձակութիւն մը: Անոնք Ռումանիոյ մէջ կը կազմէին բնակչութիւն մը՝ որ իվիճակի էր առեւտրական կապեր հաստատել երկու աշխարհներու միջեւ, որոնք իրարու կը հանդիպէին մեր երկրին մէջ, — Արեւելեան Եւրոպան եւ Արեւելեան Ասիան: Ունենալով ընդարձակ յարաբերութիւններ թուրք կայսրութեան մէջ՝ ուր մեծ թիւով կ'ապրէին իրենց հայրենակիցները, հայերը, ատեն մը եղան Արեւելքի միջազգային վաճառականութեան գլխաւոր միջնորդները: Հաստատուելով ումմէն հողի վրայ, քաղաքներու մէջ, հայերը մեծ չափով նպաստեցին ումմէն առեւտուրի զարգացման, եւ մեր տնտեսական վերելքը ժՁ. դարէն սկսեալ, կարելի է անոնց վերագրել մեծ մասամբ:

«Հայերը երկար ատեն մնացին ումմէն քաղաքներու մէջ: Մինչ այս մինչ այն՝ անոնք ձեռք ձգեցին նաեւ քաղաքական մեծ կարեւորութիւն մը»:

Փրոֆ. Անճէլէսքու յետոյ կը շեշտէ թէ առեւտրական այն դերը զոր հայերը կը կատարէին Մոլդովիա, Վալաքիոյ մէջ առաւելապէս յոյներուն ձեռքն էր: